Ալեքսանդր Ծատուրյան

Ամբոխին

...И толковала чернь тупая:
«Зачем так звучно он поет?
Напрасно ухо поражая,
К какой он цели нас ведет?..

Ի՞նչ ես պահանջում, կատաղի՛ ամբոխ,
Դու ազատ երգչի անկեղծ քընարից.
Ի՞նչ ես դու, որպես չարանենգ ոսոխ,
Հալածում նորան՝ կուրացած կրքից:

Ի՞նչ ես պահանջում... Արդյոք ուզում ես,
Որ նա յուր սրտի խանդն ու զգացմունք
Ջոհած հաճույքիդ՝ երկրպագե քեզ՝
Եվ քո առաջն խոնարհի՛ յուր ծունկ:

Արդյոք ուզում ես, որ նա սրբազան
Յուր մաքուր երգը, որպես մի վաճառք.
Փողոց հանելով՝ քրսու մեծատան
Դրվատե՞ գործեր զազիր և անարգ:

Արդյոք ուզում ես, որ նա ստրկացած,
Որպես անլեզու մի թշվառ գերի.

Խոնարհվի՞ այնտեղ, ուր գետնատարած
Դու ոտք ես լիզում բրոնավորների...

Ո՛չ... ամբո՛խ խղճուկ, ամբո՛խ դու թշվառ,
Ջուր են քո ջանքեր, ցընորք - քո պահանջ,
Ե՞րբ ես դու տեսել, որ լույսը պայծառ
Ընկճվի, խորտակվի խավարի առաջ...

Ե՞րբ ես դու տեսել, որ երկրի կրծքից
Ուժգին դուրս ժայթքող հրաբուխն անշեջ
Հանգչի գեթ վայրկյան հեղեղ-անձրևից.
Թե անգամ նոքա տեղան մի՛շտ, անվե՛րջ:

Ե՞րբ ես դու տեսել, որ դեպի երկինք
Անվախ սավառնող հրզոր արծվին
Սարսեցնեն մրրիկ, որոտ, փոթորիկ,
Երբ նա լողում է ամպերի միջին...

Օ՜, հաշտվիր, ամբոխ, սիրի՛ր դու երգչին,
Ձեռք պարզի՛ր նորան դու մտերմության.
Նա քո առաջն կը բանա ուղին
Բարվո, գեղեցկի և ճշմարտության...

1889, հունիս